

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ  
Ու ի նւուտ, փենսիլվենիա

ՏԱՐ ԵԿԱՆ ԾԽԱԿԱՆ ԱՆԴԱՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԿԻՐԱԿԻ ՓԵՏՐՈՒԱՐ 27, 1983

Ժամը 1.30ին

Համայնքիս Հովիւն ու Ծխական Խորհուրդը կը յիշեցնէ  
համայնքիս բոլոր տրատու անդամներուն թէ Տարեկան Ծխական  
Ժողովը պիտի գումարուի Կիրակի Փետրուար 27ին, 1983, կէս-  
օրէ ետք ժամը 1.30ին, եկեղեցւոյս փոքր սրահին մէջ:

Սոյն մասնաւոր հրաւերը կը ղրկենք մեր բոլոր անդամ-  
ներուն մասնաւոր նպատակով մը: Կը փափաքինք Ձեր ուշադրու-  
թեան յանձնել որ վերոյիշեալ Ծխական Ժողովի նիստին օրա-  
կարգի հարցերուն մէջ որպէս կարեւոր նոր Հարց պիտի բերուի  
հետեւեալը.-

ՀԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԼ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ

ԵԿԵՂԵՑԻ ՈՅՍ ՓՈՔՐ ՍՐԱՀԸ

Սոյն հարցի կապակցութեամբ ամէն տեղեկութիւն պիտի  
տրուի ժողովի ընթացքին, ինչպէս հարտարապետական յատակագիծ,  
մօտաւոր ծախք եւ համապատասխան հասոյթ: Վստահ ենք որ ամէն  
անձ իր պարտքը պիտի նկատէ ներկայ ըլլալ Ծխական Ժողովին, լսել  
տրուած բոլոր բացատրութիւնները եւ ըստ այնմ քուէարկել: Կը  
գնահատենք Ձեր բոլորին ներկայութիւնն ու քաջալերանքը:

Յունուար 13, 1983

ՀՈՎԻՒ ԵՒ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ  
Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկե-  
ղեցւոյ